ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/136

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.09.2018թ. թիվ 01.1/26-3/16304-18 գրությամբ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի 04.09.2018թ. թիվ 6BB6-2EE0-93A7 գրության հիման վրա, 10.09.2018թ. թիվ 01.1/26-3/16304-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 15.09.2018թ. թիվ ՌԼ-352 գրությամբ հայտնել է, որ 2018 թվականի փետրվարի 15-ին ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի միջև կնքվել է պետության կարիքների համար ապրանքի մատակարարման N «ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-6» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրով սահմանվել է Նալտրեքսոն 50մգ#10 դպճ (Անտաքսոն) դեղորայքի մատակարարումը 2018 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 364 355 (երեք հարյուր վաթսունչորս հազար երեք հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ:

«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն 2018 թվականի մայիսի 30-ին ստացել է «Զամբոն» ընկերության թիվ 064/18 գրությունը, ըստ որի վերջինս հայտնում է, որ դեղը արտադրությունից դուրս է եկել և այլևս չի արտադրվում:

Ի լրումն վերոնշյալ գրության՝ արտադրողը, իր 13.09.2018թ. 102/18 գրությամբ հիմնավորում է տվյալ դեղի արտադրության դադարեցումը՝ կապված նոր առևտրային անվանման արտադրության և մակնշման հետ:

Ի պատասխան Ընկերության հարցման հայաստանյան դեղերի շուկայում առկա հնարավոր համարժեքների առկայության մասին՝ «Ակադեմիկոս Է.Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաներ փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն հաստատել է, որ «Նալտրեքսոն» միջազգային չպատենտավորված անունով «Անտաքսոն» առևտրային անունով դեղը միակ գրանցված դեղն է շուկայում:

Վերլուծելով բերված փաստարկները՝ Ընկերությունը գտնում է, որ տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցություն: Մի կողմից «Անտաքսոն» դեղը հանվել է արտադրությունից, մյուս կողմից Հայաստանի հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում առկա է միայն այդ դեղը:

Ընկերությունը սպառողների շրջանում հայտնի է իր բարի համբավով և երբեք իրեն թույլ չէր տա խախտել պայմանագրային պարտավորությունները՝ անկախ պայմանագրային արժեքից:

«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն խնդրել է անվավեր ճանաչել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու հիմքերը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/136 ընթացակարգի շրջանակներում 12.09.2018թ. ժամը 10:30-ին և 17.09.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.09.2018թ. թիվ 6BB6-2EE0-93A7 գրությամբ հայտնել է, որ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծարել է 15.02.2018թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ «ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-6» պայմանագիրը: Պայմանագրի կողմը հանդիսանում է «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն, որը էականորեն խախտել է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/136 ընթացակարգի շրջանակներում 12.09.2018թ. ժամը 10:30-ին և 17.09.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/136 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/136 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի միջև 15.02.2018թ. կնքվել է պետության կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ «ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-6» պայմանագիրը, որի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն պարտավորվել է 1-4-րդ եռամսյակների ընթացքում Պատվիրատուին մատակարարել 364 355 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 250 հատ «Նալտրեքսոն 50մգ#10» դեղահատ:

2. «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ին ուղղված 01.08.2018թ. թիվ ՌԼ-318 գրությամբ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն հայտնել է, որ դեղը դուրս է եկել արտադրությունից, ինչի արդյունքում անհնար է դարձել Ընկերության կողմից անհրաժեշտ պիտանելիության ժամկետով դեղի մատակարարումը:

3. «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին ուղղված 04.09.2018թ. գրությամբ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է «ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-6» պայմանագիրը:

4. ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 14.09.2018թ. թիվ 0106133918 գրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում «Նալտրեքսոն» միջազգային չպատենտավորված անվանումով դեղը գրանցված է միայն «Անտաքսոն» առևտրային անվանմամբ:

5. «Անտաքսոն 50մգ դեղապատիճներ N 10» արտադրող կազմակերպություն հանդիսացող իտալական «Զամբոն Ս.Պ.Ա» ընկերության 30.05.2018թ. գրության համաձայն՝ «Անտաքսոն 50մգ դեղահատեր N 10» դեղի արտադրությունը դադարեցվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.09.2018թ. թիվ 01.1/26-3/16304-18 գրությունը, «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի 04.09.2018թ. թիվ 6BB6-2EE0-93A7 գրությունը և կից փաստաթղթերը, «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի 15.09.2018թ. թիվ ՌԼ-352 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 405-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի միջև 15.02.2018թ. կնքվել է պետության կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ «ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-6» պայմանագիրը:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ վաճառողը (տվյալ դեպքում՝ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ) պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին («Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն պարտավորվել է 2018թ. 1-4-րդ եռամսյակների ընթացքում Պատվիրատուին մատակարարել 364 355 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 250 հատ «Նալտրեքսոն 50մգ#10» դեղահատ:

«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ին ուղղված 01.08.2018թ. թիվ ՌԼ-318 գրությամբ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընկերության պահեստում առկա է դեղից 83 տուփ՝ 31.03.2019թ. պիտանելիության ժամկետով, ինչը չի համապատասխանում մատակարարվող դեղի մնացորդային պիտանելիության ժամկետ ունենալու պահանջին, այն է. 2.5 տարեկանից ավելի պիտանելիության ժամկետ ունեցող

դեղերը և պատվաստանյութերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանելիության ժամկետ:

Ընկերությունը հայտնել է, որ բազմիցս դիմել է դեղն արտադրող իտալական «Զամբոն» ընկերությանը՝ նոր պիտանելիության ժամկետով դեղի ներկրման հարցով, սակայն պատվերը չի ընդունվել, իսկ ավելի ուշ Ընկերությանը տեղեկացվել է, որ դեղը դուրս է եկել արտադրությունից, ինչի արդյունքում անհնար է դարձել Ընկերության կողմից անհրաժեշտ պիտանելիության ժամկետով դեղի մատակարարումը:

Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին ուղղված 04.09.2018թ. գրությամբ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է «ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-6» պայմանագիրը:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.7-րդ կետի համաձայն՝ վաճառողն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Նույն կետի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «Անտաքսոն 50մգ դեղահատեր N 10» արտադրող կազմակերպություն հանդիսացող իտալական «Զամբոն Ս.Պ.Ա» ընկերության 30.05.2018թ. գրությունը և լրումն գրության 13.09.2018թ. գրություն, որոնց համաձայն՝ «Անտաքսոն 50մգ դեղահատեր N 10» առևտրային անվանմամբ դեղի արտադրությունը դադարեցվել է՝ նոր առևտրային անվանմամբ և պիտակավորմամբ «Նալտրեքսոն» պարունակող անալոգ դեղ արտադրելու նպատակով:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացրել է նաև ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 14.09.2018թ. թիվ 0106133918 գրությունը, որի համաձայն՝ Հայաստանի

Հանրապետությունում «Նալտրեքսոն» միջազգային չպատենտավորված անվանումով դեղը գրանցված է միայն «Անտաքսոն» առևտրային անվանմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի միջև 15.02.2018թ. կնքված թիվ «ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-6» պայմանագիրը միակողմանի Պատվիրատուի կողմից լուծվել է Ընկերության կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով: Միևնույն ժամանակ, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն, ուսումնասիրելով Պայմանագրի առարկա հանդիսացող, Ընկերության կողմից մատակարարման ենթակա «Նալտրեքսոն» պարունակող «Անտաքսոն 50մգ դեղահատեր N 10» առևտրային անվանմամբ դեղի արտադրող կազմակերպության 30.05.2018թ. և 13.09.2018թ. գրությունները, համաձայն որոնց նշված դեղն այլևս չի արտադրվում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 14.09.2018թ. թիվ 0106133918 գրության, ***«Նալտրեքսոն» միջազգային չպատենտավորված անվանումով դեղը Հայաստանի Հանրապետությունում գրանցված է միայն «Անտաքսոն» առևտրային անվանմամբ***, որն այլևս չի արտադրվում, գտնում եմ, որ նման պայմաններում Ընկերության վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ Ընկերության կողմից պայմանագրային պարավորությունների չկատարումը պայմանավորված է եղել Ընկերության կամքից և վարքագծից անկախ հանգամանքներով: Ընդ որում՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, ***որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում,*** բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի,

հետևաբար «Անտաքսոն 50մգ դեղահատեր N 10» դեղի արտադրությունից դուրս գալու պայմաններում, Ընկերությունը զրկված է եղել նաև այլ առևտրային անվանմամբ «Նալտրեքսոն» միջազգային չպատենտավորված անվանումով դեղ ներմուծելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.09.2018թ. թիվ 01.1/26-3/16304-18 գրությամբ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02542882) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**